Հետծննդաբերական ստուգումներ
Հետծննդաբերական շրջան

Ի՞նչ են իրենցից ներկայացնում հետծննդաբերական ստուգումները

Հետծննդաբերական ստուգումները ծննդաբերությունից հետո՝ երեքից յոթ շաբաթների ընթացքում ձեր խնամք մատուցողին այցելություններն են:

Նշում Եթե ծննդաբերությունը տեղի է ունեցել կեսարյան հատման օգնությամբ (Կեսարյան հատում), ապա ձեր խնամք մատուցողը կստուգի կտրվածքի հատվածը՝ ծննդաբերությունից մեկ կամ երկու շաբաթ անց: Սա հետծննդաբերական ստուգում չէ:

Ինչո՞ւ են անհրաժեշտ հետծննդաբերական ստուգումները

Այս այցելությունները թույլ են տալիս ձեր խնամք մատուցողին ստուգել ծննդաբերությունից հետո ձեր ֆիզիկական և հոգեկան վիճակը: Հաճախ մայրիկներն այնքան զբաղված են լինում իրենց նորածնով, որ մոռանում են կամ պարզապես չեն գնում հետծննդաբերական ստուգումներին: Սակայն այս այցելությունը հատկապես կարևոր է ՁԵԶ համար:

Ի՞նչ է պետք սպասել հետծննդաբերական ստուգումների ընթացքում

- Ձեր խնամք մատուցողը կհամոզվի, որ դուք կազդուրվում ենք:
- Ձեր խնամք մատուցողը կհարցնի, թե ինչպես է անցնում կրծքով կերակրումը:
- Ձեր խնամք մատուցողը կզրուցի ձեզ հետ բեղմնականխման և ընտանիքի պլանավորման մասին և կասի՝ թե երբ կարող եք կրկին վերադառնալ սեռական կյանքին:
- Ձեր խնամք մատուցողը կստուգի՝ արդյոք ձեզ մոտ առկա են հետծննդաբերական ընկճախտի նշաններ:
- Ձեր խնամք մատուցողը կպատասխանի ձեզ հետաքրքրող բոլոր հարցերին:

Այցերի պայմանավորվածությունների ձեռքբերումը ծննդաբերությունից հետո կօգնի ձեզ առողջ մնալ:

Ձեր խնամք մատուցողը կհամոզվի, որ դուք ստանում եք ձեզ անհրաժեշտ խնամքը:

Դա կարևոր է, քանի որ ՁԵՐ մասին հոգ տանելը թույլ է տալիս համոզված լինել, որ ձեր նորածինը ևս լավագույն խնամքը կստանա:

Հարցերի դեպքում

Զանգահարեք մեր շուրջօրյա բուժքույրական խորհրդատվական գծով Մենք միշտ պատրաստ ենք աջակցել ձեզ

Անգլերեն՝ **(888) 275-8750**

Իսպաներեն՝ **(866) 648-3537**

TTY/TDD. **711**

Տրամադրված՝ Molina Healthcare-ի կողմից: Այս թերթիկում ներկայացվածը բացառապես տեղեկատվական բնույթ է կրում: Այս տեղեկությունները չենփոխարինում ձեր խնամք մատուցողի խորհուրդները:
Այս տեղեկատվությունն այլ լեզուներով և մատչելի ձևաչափերով ստանալու համար խնդրում ենք զանգահարել անդամների սպասարկման ծառայություն:
Այս համարը հասանելի է ձեր Անդամակցության քարտի հակառակ կողմում՝